

Հասկանալի է, որ այս ախուր լուրը առաւել վշտաց-  
րեց մեզ:

Գռների մօտ կանգնած էին արդէն վաղուց ժողովուած՝  
միւս բաժինների պահապանները և կարլ Վէրնէր, Բալտազար  
Քեռլիզ անտառապետները և ամենքի գլուխ անցած՝ Յակոբ  
Գէպպը:

Միմեանց ձեռք սեղմելով՝ որոշեցինք լուսթեամբ լսել  
օբէրֆէրատերի նկատմունքները, իսկ եթէ հարկաւոր լինէր  
պատասխանել, պէտք է, իբրև ամենաաւագ անտառապետը,  
ես խօսէի:

Ստիպուած եղանք կէս ժամ սպասել, որովհետև խնջո-  
քը երկարում էր, ծիծաղում էին, բաժակները շրխկացնում,  
նուազում ու երգում. «Wacht am Rhein»:

Զնայելով նոցա անհաւատալի անտիպուածան, ալը  
մարդիկ այնուամենայնիւ չէի կարծում թէ ալդպիսի խոշոր  
լաղթանակ կտանեն. և ես կարծում եմ, որ չնայելով վաղօ-  
րօք արած պատրաստութիւններին և թուի գերազանցութեան,  
եթէ մենք ուրիշ վարիչներ ունենայինք—նոքա ալդպէս չէին  
կարող սերախանալ:

Վերջապէս երկու ժամին մի գերմանացի՝ գլխին կանաչ  
թաղիքէ և աքաղաղի փետուրներով դարդարած գլխարկ զը-  
րած, ուրախ դէմքով և մինչև ականջները կարմրած ալտե-  
րով, որովհետև խոհանոցից էր դուրս գալիս, դուռը բաց արեց:

—Կարող էք ներս գալ,—ասաց նա:

Անցնելով մի մեծ սենեակ, միւսում մենք տեսնք պ.  
օբէրֆէրատերին: Նա մենակ էր և նստած բնդկաթուի մէջ  
երկախ սեղանի ծալրին, —որի վերայ տակաւին մնում էին  
աղանդերն ու դատարկ շիշերը—կարմրած երեսով և ինքնա-  
զո՛ր կերպով ձեռները խաչած փոքի վերայ:

Դա մի գեղեցիկ տղամարդ էր, կանաչ մանուղէ և կզա-  
քիսի սորթի բալորած բաճկոն հագին: Այն, ժօրժ, պէտք է  
ասած, որ շատ գեղեցիկ, բարձրահասակ, բարեկազմ մի տղա-  
մարդ էր, մեծ գլխով, մաղերը խուզած, պինդ ծնօտներով,  
երկախ բեղերով և լալն, ցած կախուած ալտամօրուքով: Մի-  
միայն մեծ, կարծես ուռած սպիտակ բծերով ծածկուած կար-  
միր քիթը ակամալից ապշեցնում էր ձեզ առաջին վալրիե-  
նին և կարծես, ստիպուած էիր—ի լարդանս նորա կոչման—  
աչքերը ցած թողնել:

Նա նախում էր, թէ ինչպէս ենք մտնում, իւր փոքրիկ մոխրագոյն աչքերը պշացրած. և երբ վերջապէս ամենքս կանգնեցինք սեղանի շուրջը գլխարկները ձեռքներիս, նա մի անդամ ևս անթարթ հալեացք ուղղեց մեզ վերայ, բաճկոնակը ցած քաշեց, հաղաց և սկսեց մեզմ կերպով.

— Ամենքդ էլ փառաւոր մարդիկ էք երևում. դուք ամենքդ էլ գերմանական բարի կերպարանք ունիք, այդ բանից ես շատ դո՛ւ եմ. Շատ էլ լաւ էք պահում ձեզ. ես շատ գո՛ւ եմ ձեզանից:

Վողքի սենեակից բարձրաձայն ծիծաղ լսուեցաւ, որ ընդհատեց նորա խօսքը:

— Դուռը փակիր, Վլիկէլմ.— ասաց նա մեզ ընդունող ծառային. ծառան կատարեց պատուէրը և նա շարունակեց.

— Սյո, դուք բարի, գերմանական դէմք ունիք. և ես սկսեալ զայրութիւն եմ զգում, երբ մտածում եմ, որ ձեզ այսքան տարի ստրկութեան մէջ են պահել, — այդ թեթևամիտները: Բայց, Բարձրեալի և մեր մեծ ինքնակալ Վլիկէլմի լազրթական զօրքի շնորհիւ՝ ազատութեան ժամը հնչեց, և Սողոմ Գոմորի թագաւորութիւնը վախճան ունեցաւ: Ալսուհետև ընտանիքների ազնիւ հայրերն ու հաւատարիմ, իրանց պարտաւորութիւնները ազնուութեամբ կատարողներն ու նորին մեծութեան սեպհականութիւնը պահպանող ծառաները ստիպուած չեն լինի հինգ կամ վեց հարիւր ֆրանկ ուճկով ապրել, մինչ օրէնքը խախտող որեւէ բաղդախնդիրներ, խաղամուկներն ու զանազան արատաւորներ տարին քառասնական միլիօններ են սեպհականացնում իրանց՝ պարեկող կանայք, խոհարարներ, խաբեբաներ, լրտեսներ պահելու, այլ և նորա համար, որ անշրջանկատ կերպով, լիմարաբար, առանց որեւէ շարժառիթի պատերազմ չալտարարեն խաղաղ դրացիներին, չուճենալով ոչ զօրք, ոչ պատերազմական գործիք, ոչ թընդանօթ, միով բանիւ սչինչ: Չէ, այդ բանն այլ ևս չի լինիլ ձեր Գերմանիան թող չի տալ:

Եւ միանգամայն դո՛ւ իւր ձառից, պ. օբէրֆէրստէրը մի բաժակ գինի լցրեց, մտքերը թարմացնելու համար, քիչ քիչ խմեց, աչքերը կիսախուփ, և շարունակեց.

— Ես ձեզ կանչեցի այստեղ, որ ձեզ հաստատեմ ձեր պաշտօններում, որովհետև դիտեցի անտառները, ամեն ինչ կարգին գտալ, համոզուեցի, որ դուք հաւատարիմ ծառաներ

հք. ուստի և արդարութիւնը պահանջում է ձեր տեղերում թողնել ձեզ, և ես լալտնում եմ, որ ձեր ռոճիկները կիրկնապատկուին. հին ծառայողները արձակուելու փոխարէն բարձր պաշտօն կտանան. նոքա իրանց կոչման համեմատ բաւարարուած կլինին,—միով բանիւ, նորին մեծութեան առատաստութիւնը կտարածուի ըտրորիզ վերայ և ծերութեան հասակում օրհնող կլինիք ազնիւ էլզասի բաղտաւոր միացումը իւր իւր ալժման հարեհնիքի հետ: Գուք ժամանակով կպատմէք ձեր որդոց ու թոռներին այն Բաբելոնեան գերութեան մասին, որի մէջ ալքան երկար նեղութիւն ու տանջանք կրեցիք, և նույնպէս ամենահաւատարիմ ծառաները կլինիք նորին արքայական մեծութեան:—Ահա իմ ցանկութիւնը:—Աղպիսի հաւատարիմ ծառաներ, լարդուած իրանց հրաշալի ծառայութեան համար, միշտ մեծ աղղեցութիւն ունին գիւղացիների վերայ: Գուք պէտք է բարձր ձայնով ու բաց արտալալտէք ձեր սրտագին, իւրաքանչիւր գերմանացու սրտում կենդանի, անձնութիւնը մեր մեծ արքայ Վիլհէլմին: Ար՛, պէտք է երդուէք. ինչ վերաբերում է ռոճիկ աւելցնելուն, ես ձեզ օրէքէրատէրի խօսք եմ տալիս, որ ամեն ինչ կկարգադրուի ինչպէս ես ձեզ ասացի:

Խօսելիս նա շարունակ դիտում էր մեզ: Մեր ետևում կանգնած էին երկու թէ երեք բարձրահասակ գերմանացիք համազգեստով, որոնք ըստ երևութին ոչ թէ միայն լալշտալ կուած էին, այլ և խորը զգացուած նորա ճառից: Բայց մենք, զլխարկները ձեռներևս, կանգնած էինք խիստ անտարբեր. և որովհետև ես պէտք է պատասխանէի, ուստի ամենքն ինձ էին նալում, աշխատելով դուշակել իմ միտքս: Դու հասկանում ես, Ժօրժ, թէ ինչ մեծ էր իմ ներքին զալրուլթը, երբ լսեցի, որ մեզ անուանում են ազնիւ մարդիկ և հաւատարիմ ծառաներ, եթէ մենք դաւաճաններ դառնանք: Ես զգում էի, որ արիւնը խփում էր երեսիս, և կցանկալի հնար ունենալ պատասխանելու, որ միայն վատերը կարող են ազնիւ մարդու տիաղոս ընդունել, պատուին դաւաճանելով, — բայց լեզուս պահեցի, չուզեմալով ընկերներիս անպատուել, վասն զի նոցանից շատերը ծանրաբեռնուած էին ահազին ընտանիքներով. պատասխանատուութիւնը խիստ ծանր թուեցաւ ինձ:

Նրբ ճառն աւարտեց, պ. օրէքէրատէրը մի սուր հալտացք ձգեց մեզ և լատկապէս ինձ վերայ:

—Ի՛նչ քնն կտեսք, իրաւունք եմ տալիս խօսելու,—ասաց նա:

—Պ. օրէրֆէրստէր,—պատասխանեցի ես,—ընկերներս իրաւունք են տուել ինձ, ինչպէս ամենից աւագ անտառապետի, խօսելու ամենքի կողմից. բայց ձեր առաջարկութիւնը վերին աստիճանի լուրջ բան է, և ես ենթադրում եմ, որ մեզանից ամեն մէկը ժամանակ կ'ընդդէ մտածելու:

Ամենքը գլուխները խոնարհեցին. իսկ նա, միանգամայն զարմացած, — վասն զի կարծում էր, թէ ոտնիկն աւելացնելը վճռել էր ամեն բան,—մի րոպէից աւելի նստած էր աչքերը չուած, և նստում էր ինձ, կարծես թէ մի տարօրինակ քան տեսած լինէր. վերջապէս նա մի աչք ածեց միւսներին և աւելացրեց արդէն խիստ կերպով.

—Ես ձեզ 24 ժամ միջոց եմ տալիս: Վաղը հէնց այս ժամանակ ես պէտք է ունենամ զբաւոր և ամեն մէկիդ ստորագրութեամբ պատասխան, այն կամ ոչ: Մի կարծէք, թէ մարդիկ չունինք, Գերմանիայում շատ կան փորձուած անտառապետներ, որոնք ձեզանից լաւագոյնից պակաս հմուտ չեն գործին. և նոքա շատ ուրախ կ'լինին հարուստ իլլզաւը վերաբնակուելու նորա ճոխ բուսականութեան մէջ, տեղաւորուելու տաք բներում հրաշալի անտառների մէջ, առաւօտ երեկոյ շրջապակելու իրանց բաժնում, արձանագրութիւն կադմետու և այդ բանի համար 1500 Ֆրանկ ստանալու տարին, տուն պարտիդով, խոտհունձ, վառելիքիւր, արօտատեղ կովի համար և մնացեալ ամեն բան: Ո՛չ, այդպէս մի կարծէք, Հարիւրաւոր մարդիկ անհամբեր սպասում են, որ մի նշան տանք գալու: Եւ ձեր պատասխանը լաւ կ'ընեցէք. մտածեցէք ձեր վանանց ու երեխայոց մասին, լիշեցէք, որ դուցէ ստիպուած կ'լինիք դառնապէս զղջալ, եթէ ասէք-ոչ: Ֆրանսիան իսպառաւերուած է, նա ոչ մի կոպէկ չունի. Լանդերում և Բրէտանում մնացած ողորմելի անտառները աւելի պէտք անգամ չեն. այդ մացառների պահապանները կ'մնան իրանց տեղերում, իսկ դուք երբէք տեղ չէք ստանալ: Դուք—գերմանացիներ: Ֆրանսիացիք շահագործում են և անարդում են ձեզ. նոքա ձեզ հաստագլուխ են անուանում: Մտածեցէք այս ամենը. ես խորհուրդ եմ տալիս ձեզ իբրև աղնիւ մարդ, ինչպէս գերմանացի-եղբար և ընտանիքի լաւ հայր:

Եւ նա նստեց ինձ, սպասելով, որ ես որեւէ բան կ'ասեմ,

բայց ես չրթունքներս հուպ տուի և զգացի, թէ ինչպէս ճակատովս կարծես ստուր օղի հոսանք էր անցնում

## ԺԵ

Բոլոր ընկերներս նույնպէս լուռ էին։ Մեր կողքին, դրան ետև նուազում էին դաշնամուրի վերայ. մի կին երգում էր քնքուշ ու թախծալի եղանակով։

—24 ժամ—կրկնեց նա վերկենալով,—և ոչ մի բոպէ աւելի։

Եւ, բարկացած՝ անձևուցը սեղանի վերայ շարտելով, աւելացրեց.

—Ղաւ իմացէք, որ ոչ պատասխանը իսկոյն ճանապարհ կտայ. ճանապարհը լալն բաց է։ Մենք չենք կարող տանել մեր թշնամիներին և վնասակար մարդկանց մեր մէջ... ալդ մեծ լիմարութիւն կլինէր... Ֆրանսիացի հօ չենք։

Նա ներս մտաւ մօտակալ ընդունարանը, իսկ մենք դուրս եկանք նախասենեկով։

Ֆօրստմէլտրի վերջին խօսքերը, թէ ւսեղ զժուար կլինի էլզատում տեղ ստանալ և թէ գերմանացիք առանց խնայելու կարտաքսեն մեզ՝ զարհուրելի էր, և ամենից անվեհերները լուսահատուեցան։

Մի քանիսի մաքով անցաւ մտնել Վլզենու տակ՝ պանդոկը խորհրդակցելու. նոցա առանձնապէս հետաքրքրում էր իմ կարծիքը. բայց ես նոցա ասացի՝ պանդոկի դրան առաջ։

—Այժմ, ընկերներ, պէտք է խնայել ալն փոքրիկ դրամը, որ ունինք. մի գաւաթ գինին հինգ սոււ արժէ—բայց հինգ սուն էլ փող է։ Ժողովրդային թշուառութեանց ժամանակ ամեն բան թանգ է. չուելը թանկ է նստում, մանաւանդ կանանց, երեխաների և ձերբերի հետ ճանապարհորդելը։

Բարձրահասակ կէրնը անշուշտ ցանկանում էր իմանալ, թէ ես ինչ եմ մտածում. շատերը շրջապատել էին ինձ և ես ասացի.

—Ղսեցէք... իմ կողմից ես գիտեմ թէ ինչպէս պիտի վարուիմ, բայց ալսպիսի վարկեաններում ամեն մէկը պարտաւոր է գործել իւր գիտեցածի պէս. ամեն մէկը իւր խղճի տէրն է,—ուստի և ես ոչ սքի խորհուրդ չեմ տալ։

Տեսնելով, որ վեց երեսնաների հայր Յակովբ Խէննը խելքը թռցրեց, և ձեռները ցած թողնելով՝ դեռանին էր նալում, ազազակեցի:

— Ընկեր, ձեռքդ տուր սեղմենք, դուցէ վերջին նուագ: Թող հին բարեկամական լիշատակները մեզ հետ լինին ամենուրեք, ուր երկինքը կառաջնորդէ մեզ:

Ոմանք համբուրուեցան, և մենք բաժանուեցանք:

## ԺԶ

Ժան Մէրլէնն ու ես մենակ ուղևորուեցանք դէպի Ֆալքէրգ, չգիտեմ ինչ արին միւսները—մտան պանդոկ, թէ տուն դարձան:

Իսկ մենք այնպէս էինք մտածմունքների մէջ խորատուղուած, որ երկար գնացինք առանց ձայն հանելու:

Յօրնշտադից դուրս գալով՝ բարձրացանք Բրիւէրի բարձրութեան վերայ, մինչև Գրատուֆտալի դաշտը: Յանկարծ արեւը, ամպերի տակից դուրս նալելով՝ լուսաւորեց անտառները: Արևի լուսի տակ մերկ ծառերի միջից, հովտի խորքում, տեսանք այն սիրուն տնակը, ուր երկար բաղդաւոր օրեր էի անցրել այն օրից, երբ Բրուաառ հալրիկը իւր դուստրը կնութեան տուաւ ինձ:

Ես կանգ առալ: Ժանը նորնպէս կանգնեց, և լծնուելով ձեռնափալտերի վերայ՝ երկար ժամանակ նալում էինք, կարծես թէ երազում լինէինք:

Բոլոր անցկացրածս տարիները պատկերացան աչքիս առջև:

Փոքրիկ տնակը այդ պայծառ և ցուրտ օրը կարծես նկարուած լինէր բլրակի վերայ, բարձրուղեղ եղևնիների մէջ: Գորշ տանիքը, ծխող ծխնելուղը, լուսամուտը, ուր Վարդ-Մարին զարնանը դարսում էր մեխակն ու չափրուկը, այն վանդակը, ուր պտտում էր բաղեղը, սրահը՝ որդնակեր սիւներով—այս ամենը այնպէս մօտ էր երևում մեր աչքին, որ թուում էր, թէ կարող էինք ձեռքով շօշափել:

Նալելով այդ տեսարանին՝ ես մտածում էի:

«Նալիր, Ֆրեդէրիկ, նալիր այդ խաղաղ անկիւնին, ուր

անցել է քո երիտասարդութիւնը և որտեղից պէտք է դուրս գնաս ալեղարդ զլիսով, չգիտենալով, թէ ուր գնես այն: Ալդտեղ էին բնակուում կիւնդ և զաւակներդ, որոնցից ոմանք հանդատանում են նորա կողքին Դօզէնհայմում: Նալիր... լիւր անցեալ կեանքդ, որ անց ես կացրել լաւ մարդոց մէջ, որոնք քեզ անուանում էին բարի որդի, բարի հայր, ազնիւ մարդ և որոնք Աստուծոյ օրհնութիւնն էին հալցում: քեզ վերայ, ինչ բանի ծառայեց բարի հայր և բարի որդի լինելդ, ազնիւ վերաբերուելդ դէպի քո պարտաւորութիւնները, երբ քեզ քշում են, և ոչ ոք չէ կարող քեզ պաշտպանել: Գերմանացիք այժմ հզօր են, և ուժը երևում է բարձր իրաւունքից, որ նոյն խի Աստուծոց է սահմանուած»...

Ես սոսկացի, որ համարձակուեցայ տրտունջ լալտանել Նախախնամութեան դէմ: Բայց տանջանքս շատ ծանր էր, անօրինութիւնը թւում էր ինձ խիստ մեծ... Թող ներէ ինձ երկինքը, որ ես կասկածեցի նորա վերայ:

Իսկ բոլոր մնացածի վերաբերմամբ, իմ որոշումս անդրաւելի էր. աւելի շուտ կհամաձայնէի կորչելի, քան ստորութիւն անել, Նախելով Մէրլէնին, որ իմ կողքին լսնուել էր թխտենուն, ասացի.

—Վերջին անգամ եմ նալում իմ հին տանը. վաղը Ֆօրստմէլստորը իմ պատասխանը կըստանայ, իսկ միւս օր բոլոր ունեցածս սալի վերայ կլինի: Ասացէք այժմ, դուք ինչպէս պիտի վարուէք:

Նա խիստ կարմրեց և պտտասխանեց.

—Ո՛հ, Ֆրեդէրիկ հայրիկ, ինչպէս էք ալդ մասին հարց տալիս ինձ: Դուք ինձ վերաւորում էք: Միթէ չգիտէք թէ ինչպէս կվարուեմ: Այնպէս՝ ինչպէս դուք. ազնիւ մարդը միայն մի ճանապարհ ունի:

—Ալդ լաւ է: Ես առաջ էլ հաւատ ունէի ձեզ վերայ, բայց ուրախ եմ, որ դուք արգարացրիք իմ վարկումը ձեր մասին: Պէտք է, որ ամեն ինչ պարզ լինի մեր մէջ: Մենք գերմանացի չենք, որոնք 36 ճանապարհով են մերձենում ամեն բանի և բոլոր միջոցներն էլ լաւ են համարում միայն թէ գործը լալողի: Դեհ, գնանք, Ժան, վտտան:

Սկսանք բլրից ցած գալ, և խոստովանում եմ, Ժօրժ, քանի մօտենում էինք տանը, ծնկներս սկսում էին զողալ երբ մտածում էի, թէ այդ զարհուրելի միտքը պիտի հաղորդէի դատերս և տատին:

Վերջապէս—հասանք չէմքին. առաջինը Ժանը մտաւ. ես հետեւեցի նորան, դուռը փակեցի ետեից:

Չորս ժամի մօտերքն էր: Վարդ-Մարին ընթրիքի համար գետնախնձոր էր կնկում, իսկ տատը նստած բաղկաթուռի մէջ, տաքանում էր կրակի մօտ, ինչպէս սովոր էինք նորան տեսնել:

Նրեակալիւր իմ դրութիւնը. ինչպէս սկսէի ասել նոցա, թէ գերմանացիք արտաքսում են մեզ, Բայց բաւական էր խեղճ կանալք նալէին մեզ, որ իմանալին, թէ մի ծանրակշիւ բան է կատարուել:

Ձեռնափաշտս դրի ժամացուցի մօտ և զլխարկս կախելով մեխից, մի քանի անգամ անցուղարձ արի սենեակում. ինչ և լինէր, պէտք էր պատմել Փօրստմէյստէրի արած առաջարկի մասին պրուսական ծառայութիւն մտնելու: Առանց շտապելու, ամեն ինչ պարզ պատմեցի, առանց բան ծածկելու և աւելացնելու, ցանկալով, որ այդ ողորմելիները կարողանալին ազատութեամբ ընտրել չքաւորութիւն կամ նախատինք:

Ես հաւատացած էի սակայն, որ չքաւորութիւնը կնախընտրէին:

Վարդ-Մարին, ամբողջովին զուճատուած, մի վարկեան ձեռքերը երկինք բարձրացրեց ու շշնջաց.

—Միթէ կարելի բան է այդ, տէր: Միթէ այդ տեսակ անպիտաններ գոլութիւն ունին աշխարհումս: Ա՛խ. լաւ է մեռնել, քան այդպիսի մարդկանց հետ կապուել:

Ինձ ուրախացրեց, որ ազլիկս այդպիսի սիրտ ունի, և Ժան Մէրլէնն այնպէս զգացուած էր, որ ես տեսալ, թէ ինչպէս ձգոււմ էր նորա երեսը:

Տատը թափահարուեց, ինչպէս խխունջը խեցիի մէջ, նորա ծնօտը դողդողաց, հանգած աչքերը բարկութեամբ փալկեցին. ես ինքս ջախջախուած էի: Նրբ ասացի, թէ Փօրստ-

մէլտարը, եթէ մենք հրամարտենք Պրուսիային ծառայել, 24 ժամ է միայն տալիս, որպէս զի տանից քաշուենք, նա չկարողացաւ իւր զարդոթը ծածկել:

—Այս տունը թողնենք,—ասաց նա տեղից բարձրանալով,—երբէք: Սա իմ տունն է: Ես այստեղ եմ ծնուել, 80 տարուց աւելի է չեմ հեռացել այս տնից: Պապա Լօրան Գիւշէլը առաջին անգամ բնակութիւն հաստատեց սորանում. 130 տարուց աւելի է, ինչ որ նա պտղաբեր ծառեր է տնկել այս բլրակի վերայ. հայրս Ժակմէնը առաջինը ճանապարհ բաց արաւ մինչև Դոզէնհայմ և շաւիղ մինչև Տոմօնթալ. ամուսինս Ժօրժ Բրուատը և փեսաս Յրեդէրիկը, որ ներկայ է այստեղ, տնկել են հաճարիների և եղևինների ծառատանների, որոնց անտառներն աճում են երկու հսկիտների երկայնութեամբ. մենք ամենքս խաղաղ պարում էինք այս տանը, մենք ենք ձեռք բերել սորան. մենք պատել ենք պարտէզը կենդանի պատնէշով և ցանկապատով. ամեն մէկ ծառը—մեր սեպհականութիւնն է. մենք փող ենք խնայել, որ մարգագետին գնենք, կալատեղ և անասունների համար բակ շինենք... Մեզ արտաքսում են այս տանից: Ա՛խ, անպիտաններ... Անկնշտ են գերմանացիք վարում... Դեհ, թող մէկ զանն ինքս, Աննա Բրուատս, կիսօսեմ նոցա հետ:

Չկարողացաւ խեղճ զառամած տատիս հանգստացնել. ինչ որ նա ասում էր, բոլորը ճշմարիտ էր. բայց ի դուր կլինէր խօսել այն մարդկանց հետ, որոնք պնդում էին, թէ ուժը ամեն բան է և թէ նախատինքն ու անարդարութիւնը ոչինչ չէ նշանակում:

Սրբ նա հեալով նստեց, ես հարցրի թախծալի, բայց հաստատ ձայնով:

—Տատիկ, կկամենանք, որ ես գերմանացիների մօտ ծառայութեան մտնեմ:

—Ո՛չ,—պատասխանեց նա:

—Է՛, ուրեմն 18 ժամից լեւ պէտք է ամենքս միասին այս տանից հեռանանք:

—Սրբէք,—աղաղակեց նա:—Ես չեմ ցանկանում:

—Բայց ես ասում եմ, որ պէտք է տնել: Ես ուզում եմ...

—Ա՛խ,—զարմացած դուրս պրծաւ նորա բերանից:

Ես շարունակեցի խոցում սրտով:

—Տատիկս, գիտէք, որ ես միշտ անչափ լարգել եմ ձեզ:

Հազար անէ՛ք այդ գերմանացիներին, որոնք ստիպել են ինձ ձեզ հետ այս եղանակով խօսել. ես նոցա աւելի խիստ կանխ-  
 ձէի, եթէ հնարաւոր լինէր... բայց միթէ չէք հասկանում,  
 տառիկ, որ այդ վարենիները, առանց ամօթի, խղճի և կա-  
 րեկցութեան նոյն իսկ դէպի ծերութիւնը, եթէ դիմադրութիւն  
 տեսնեն, պատրաստ են ձեզ էլ քաշ տալ ձեր ալեզարդ մա-  
 ղերից. դուք ոյ՛ժ չունիք, իսկ նոքա ուժեղ են — և այդ բաւա-  
 կան է... Միթէ չէք հասկանում, որ ես, ալդպիսի տեսարան  
 տանել չեմ կարող, և եթէ նոքա ամբողջ գունդ անդամ լի-  
 նին — կյարձակուեմ նոցա վերալ, և նոքա ինձ կսպանեն...  
 Այնուհետև ինչ կլինի ձեր և զստերս զրութիւնը. Ա՛ն քնչի  
 մասին պէտք է մտածել, տատի՛կ: Ներեցէ՛ք, որ ձեզ հետ այս-  
 պէս կոպիտ եմ խօսում, բայց ես նոցանից ոչ մի շնորհ չեմ  
 ուզում, և հաւատացած եմ, որ դուք նոյնպէս չէք ցանկանալ.  
 Այդ անսիրտ մարդիկ այդ շնորհն էլ չէին անի մնդ:

Տատի աչքերը արտասուքով լցուեցան և շշնջաց.

— Ո՛հ, Աստուած իմ, Աստուած. պէտք է թողնեմ այն  
 տունը, ուր ես լո՛ւս ունէի թողանս երջանկացած տեսնել,  
 խնամել ծուռներս... Աստուած իմ, ինչո՛ւ չկանչեցիր ինձ  
 քեզ մօտ աւելի շուտով:

Նա այնպէս դառն էր լաց լինում, որ մեր սրտերը կըտ-  
 րատուեմ էին. ամենքս գլուխները կախել և զգում էինք, թէ  
 ինչպէս արտասուքի կաթիլները միմեանց ետևից դուրսում էին  
 մեր ալտերի վերայով: Որքան լիողութիւններ կային մեր ա-  
 մեն մէկի առաջ, բայց խեղճ տատի առաջ առաւել շատ, քան  
 մերն էր. նա հովտից հեռանում էր տարին երկու կամ երեք  
 անգամ, գնում էր Սպիերնի և Ֆայբուրդի վաճառանոցը. այս  
 էր նորա ամենահեռաւոր ճանապարհորդութիւնը:

## ԺԸ.

Վերջապէս սարսափելի հարուածը տրուեցաւ: Անհրաժեշ-  
 տութիւնը, Թօրթ, սուկալի անհրաժեշտութիւնը, ստիպում էր  
 ինձ խօսել. կանալք հասկացան, որ պէտք էր հեռանալ, գու-  
 ցէ և ընդ միշտ, որ ոչ մի բան չէր կարող հեռացնել մեզա-  
 նից այս զարուերելի գժբաղդութիւնը:

Բայց սլարտաւոր էի մի ծանր պարտականութիւն էլ

Ապատարել: Հէնց որ լաց ու կոծը հանդարտեց տանից հեռա-  
նալու որոշումից լետոյ և ամեն մէկս շուսահատ ալդ մասին  
էինք մտածում, ես սկսեցի նոր բացատրութիւն.

— Ժան Մէրլէն, — ասացի ես, — դուք խնդրեցիք դուստրս  
կնուութեան, և ես ձեզ իբրև որդի ընդունեցի, որովհետև լաւ  
ձանաշում էի ձեզ և լարդում: Սա վճռուած բան էր, մենք  
խօսք տուինք միմեանց, և այս բոլորովին բաւական էր...  
Բաւց այն ժամանակ ես անտառապետ էի, իրաւունք ունէի  
հրաժարական տալ պաշտօնիցս, և իմ տեղս լոտտացուած էր  
ձեզ, լյս հարուստ չէի, բաւց մի բան ունէի. և դուստրս լաւ  
ընկեր կարող էր համարուել: Այժմ ես ոչինչ եմ, ճիշտն ասե-  
լով՝ մինչև անդամ աղքատ եմ: Հնոտի կարասիս, որ մնում է  
ինձ, այստեղ մեր տանը լարմար էր. բաւց երբ հարկ լինի տա-  
նեւ՝ միմիայն բեռը կարող է լինել մեզ, այն մարգագետինը,  
որ գնել եմ հաւաքածս դրամով, դին ունէր իբրև տանս մօտ  
գտնուող, իսկ եթէ վաճառենք՝ կէս գին էլ չեն տալ:

Ինչ դուք գերմանացիք կըլատնեն, որ անշարժ կա-  
լուածքը ուղղակի նոցա պէտք է անցնի որպէս սեպհականու-  
թիւն: Ալդ միայն նոցանից է կախուած, վասն զի ով ուժեղ  
է — նա է և արդարը: Ի՞նչ էլ առանց գործի չմնաք. ձեր պա-  
ռաւ մալրը ձեր խնամքին պէտք է մնալ: Կին պահելը, այս  
բոլոր դժբաղդութիւնների մէջ, ծանր կթուի ձեզ... Այս բո-  
լոր պատճառներով, ժան, լիմ և դատերս պատիւը պարտք են  
գնում ինձ վերալ խօսքդ լետ դարձնել ձեզ: Հանգամանքները  
փոխուեցին, Վարդ-Մարին ոչինչ չունի, և ես հասկանում եմ,  
որ այսպիսի ծանր դէպքերում աղնիւ մարդը կարող է իւր  
դիտաւորութիւնը փոխել:

Մէրլէնը գունատուեց, ինձ լսելիս, և դողդոջուն ձայնով  
պատասխանեց.

— Ես ցանկանում էի Վարդ-Մարիի հետ ամուսնանալ  
հէնց իւր սիրուն, Ֆրեդերիկ հարիկ, և միայն նորա համար,  
որ սիրում եմ նորան, և նա ես ինձ է սիրում: Ես ցանկա-  
նում էի պսակուել նորա հետ ոչ ձեր պաշտօնի և ոչ նորա օ-  
ժիտի համար. եթէ ես ալդպէս վարուէի, անպիտան մարդ  
կլինէի: Այժմ աւելի լաւ եմ գնահատում նորան քան առաջ,  
վասն զի համոզուեցայ, թէ ինչ պատուական սիրտ ունի նա,  
իսկ սա ամենից քարձր է:

—Եւ վերկենալով՝ ձեռքը մեկնեց նորան:

—Վարդ-Մարի:

Հաղիւ թէ արտասանել էր նորա անունը, օրիորդը արտասուալից աչքերով վրայ ընկաւ ու փաթաթուեց նորա վրդով: Նոքա երկար այդպէս գրկած կանգնած էին, իսկ ես մտածում էի:

Ռուստրս աղնիւ մարդու ձեռքին է—սա ամենամեծ մխիթարութիւնն է մեր ամեն սոսկալի դժբաղտութիւնների մէջ:

Սորանից լետու, Ժօրժ, չնայելով մեր բոլոր լուսահատութեան, խողաղութիւնը տիրեց մեզ վերայ, Մէրլէնն և ես որոշեցինք միւս օրն այս պատասխանը տանել Յօրնշտագ:

«Ո՛չ, պարոն ֆօրստմէլտր. մենք չենք ծառայի պրուսաց արքային»: Ես տեղնուտեղը գրեցի այդ, և Ժանը տոմսակը դրեց զրոյանը:

Վճռուած էր նոյնպէս, որ առաւօտը վաղ ես գնալի Գրաուֆտալ, մեզ համար բնակարան որոնելու: Իկէլի մօտ առաջին լարկում երեք սենեակ միշտ ազատ էր գերմանացիների արչաւելու ժամանակից: Ո՛չ մի ճանապարհորդ չէր երևում մեր կողմերը: Իկէլի ակոռն էլ դատարկ էր, և լոյս ունէի վարձել այդ բոլորը արժան գնով:

Մէրլէնը դեռ պէտք է մօրն ևս նախազոշուցնէր, որ անտառը թողնելու էր. նա սասց, թէ մօրը Ֆալթէրզ կուղարկէ, ուր Գանիէլ հօրեղբայրը ուրախութեամբ կընդունէ նորան: Գայրոցական այդ հին վարժապետը երկար ժամանակ ապրում էր քրոջ հետ միասին. միայն երբ Ժանը պաշտօն ստացաւ, նա մօրը տարաւ իւր տուն Տօմօնթալի անտառում:

Բարի պառաւ Մարդէդէլն ուրեմն պէտք է վերադառնար իւր նախկին կացարանը:

Սոքա էին մեր վերջին որոշումները: Ժանը իւր վերալտաւ նաև Լարօշի մօտ մտնելու աշխատանքը, տեղեկացնելու նորան պատահած անցքերի մասին և ասելու, որ ես կը գնամ նորան տեսնելու, հէնց որ կտեղափոխուեմ: Նա մի անգամ ևս գրկեց Վարդ-Մարիին, մի քանի դովեստի խօսքեր ասաց տատին և զուրս գնաց. Ես ուղեկցեցի նորան մինչև դրան շէմքը և բաժանուեցանք: Գիշերը եկաւ. սաստիկ ցըրտեց, ամեն մի դալար փալլում էր եղեամով և երկինքը արծաթազօծուած աստղերով: Այդպիսի մի ժամանակ մենք ստիպուած էինք տունը դատարկել և ուրիշ ապաստանարան որոնել:

Երբ ես դարձաւ տուն, Կալասը սեղանի վերայ դրեց դեռնախնձոր և երկու ամանով շինուկ. նա դարձանքով նախում էր ինձ, և ոչ ոք տեղից չէր շարժուամ:

—Նստի՛ր Կալաս,—ասացի նորան.—ալսօր մենք ամենքս սովածացել ենք:

Նա նստեց և սկսեց դեռնախնձորը կծուել. ախուռատան ալքը մաքրելով և անասուններին կեր տալով—նա դորանով լրացնում էր իւր բոլոր պարս սկանութիւնները. նորա խիղճը հանդիստ էր:

Բաղդաւոր է ով միւս օրուայ համար մտմտուք չունի և ում վրձակուած չէ թշնամու լարձակման ակնատես լինել... նոքա մեր տանջանքների մի չորբորդն էլ չեն կրում... Սկիւռը, նասպատակը, աղուէսը, բոլոր կենդանիները մազով են ծածկուած ձմեռնամտին. թռչուններին աղուամազ է դուրս դալիս փետուրների տակ. իսկ դոցանից նոքա, որոնք չեն կարող ձմեռը ցուրտ երկրում ապրել, միջատների պակասութեան պատճառով, որոնք ծառալում են նոցա իբրև կերակուր, օժտուած են ուժեղ թևերով, որոնց օդնութեամբ նոքա թռչում են առաւել տաք երկիրներ:

Միայն մարդը ոչինչ ոյժ չունի իրան օգնելու: Ո՛չ աշխատանքը, ոչ նախատեսութիւնը, ոչ քաջութիւնը չեն կարող նորան պահպանել դժբաղդութիւնից. մերձաւորները լաճախ նորա ամենաչար թշնամիներն են դառնում, իսկ ծերութիւնը լրացնում է նորա չարչարանքները: Անա մեր վրձակը:

Մի քանի մարդիկ մտածում են իրենք իրենց կառավարել, բայց դժուար բան է. դորա համար հարկաւոր է մանաւանդ շատ սէր և խելք, որ հէնց մեզ միշտ պակասում է:

Ուշ գիշերը մենք բաժանուեցանք և մեզանից ամեն մէկը իւր անկիւնում մտածում էր մեզ խորտակող դժբաղդութեան մասին:

### ԺԹ.

Միւս օրը, նոյեմբերի 1-ին, լուրը չբացուած ճանապարհընկալ դէպի Գրսուֆտալ: Հագալ խալաթս, հաստ կոշիկներս և ծածկեցի կլոր գլխարկս: Ճանապարհի երկու կողքերքում ծառերը կորացել էին եղենու տակ. երբեմն երբեմն մշտնաւն

ու թուխկատարը դուրս էին թռչում ձիւնով ծածկուած թփի տակից. և բարձրանալով օդի մէջ՝ ճչում էին, կարծես ցանկալով հրաժեշտ տալ ինձ: Այդ ժամանակից ես շատ անդամ եմ լինել ալօ օրը. ես աքսորի ճանապարհի վերայ էի. Ժօրժ, ալօ ուղևորութիւնը միայն սկսուեց և շատ երկար եղաւ:

Եթէր ժամին մօտ հասալ մեծ ժայռերին, որոնց մօտ դիւղի ամենախղճուկ տնակներն էին, միւս տները ձգուում էին գետի ուղղութեամբ. և կանգ առալ Իկէլի տան մօտ:

Ներս մտնելով՝ անցալ խոհանոցի միջով ծխախոտի մը խով լիքը պանդոկի փոքրիկ դահլիճը: Աննկուում ալնպիսի լուռութիւն էր տիրում, որ կամեցալ ում և իցէ կանչել, բաց աչքիս ընկաւ Իկէլը, որ թասակը մինչև ականջները ցած քաշած և սև ծխամորչը ատամներում՝ նստած էր վառարանի մօտ. նա տեղից չշարժուեց, որովհետև մի քանի շաբաթ առաջ նորան ծանր լօղալին թուլութիւն էր պատահել մի միգապատ դիշեր ձուկ որսալու ժամանակ:

Երբէք ամբողջ հովիտը դորանից լաւ ձկնորս չէր տեսել. նա կարմրախաւստ ու խեցղետին էր ծախում Ստրասբուրգի ամենահարուստ հիւրանոցներում:

Դժբաղդաբար վաղ թէ ուշ ամեն բանի փոխարէնը պիտի ստանալ. ծանր լօղացաւ ստացաւ և նորան մնաց միայն երազել երբեմն գետի լաւ լաւ տեղերի մասին, ուր ամենից շատ ձուկն էր ընկնում իւր թոռի մէջ:

Երբ ես նկատեցի նորան, նորա փոքրիկ մութ աչքերը լառած էին ինձ վերայ:

—Դձեք էք, Ֆրեդէրիկ հալրիկ,—ասաց նա: Ինչո՞ւ եկել էք ինձ մօտ ալնպիսի մի ժամանակ, երբ ալս անպիտանները աւերում են մեզ: Եթէ ձեր տեղը լինէի, լաւ կհամարէի մնալ անտառում, դալլերն ալնպէս վատ դրացիներ չեն, ինչպէս գերմանացիք:

—Միշտ հնարաւոր չէ ուղածի պէս վարուել,—պատասխանեցի նորան.—Ազատ են ձեր վերին երեք սենեակները և ախոռում տեղ ունիք երկու կովի համար:

—Տեղ ունիմ,—գոչեց նա.—Այո՞, պրուսացիները դատարկեցին: Նոքա դուրս տարան անասունը, իսկ հեռն էլ փախցրին խոտը, դարմանը, գարին, ալիւրը... Տեղ... տեղ... Այո՞, ես ալժամ տեղ շատ ունիմ—բոլորն ազատ է, ձեզունից մինչև նկուղը, և դեռ երկար ժամանակ ազատ կլինի... Չարագործ...

ներ... Տէր, օգնիր, որ միանգամ մենք նստենք նոցա դիմին.  
 Հնախելով լօղացաւիս, անթացուպերով կերթամ նոցանից լեռ-  
 առնելու ալն ամենը, ինչ որ լախշտակել են ինձանից:

—Ուրեմն,—հարցրի ես,—ազատ են ձեր սենեակները:

—Այն, ախտուն էլ փոքրիկ բակով խոտի ճամար ձեր  
 տրամադրութեան տակ կլինի: Բայց ինչո՞ւ էք ինձ հարցնում  
 այդ մասին:

—Որովհետեւ եկել եմ վարձելու ձեզանից:

—Դուք,—ազադակեց նա զարմացած,—ինչո՞ւ ձեր տանը  
 չէք մնում:

—Պրուսացիները արտաքսում են:

—Արտաքսում են ձեզ... Ինչի:

—Որովհետեւ հրաժարում եմ գերմանացիներին ծառայելու  
 իկէլը զգացուած էր. նորա կեռ քիթը մինչև կզակն էր  
 հասնում, և ասաց լուրջ կերպով.

—Ես միշտ կարծում էի, որ դուք կատարեալ մարդ էք,  
 Ֆրեդէրիկ հարթիկ. Դուք մի փոքր խիստ էիք, կատարելով  
 ձեր պաշտօնի պարտաւորութիւնները, բայց միևնույն ժամա-  
 նակ միշտ արդարադատ էք եղել. ոչ ոք չէ կարող ուրիշ բան  
 ասել ձեր մասին:

Ապա նա ձայնեց.

—Կատէլ... Կատէլ...

Եւ նույա դուտորը, որ կրակ էր վառում հնոցում, ներս  
 մտաւ:

—Լսիր, Կատէլ,—ասաց նա՝ մատնացուց անելով ինձ  
 վերալ.—ահա Ֆրեդէրիկ հարթիկը, որին պրուսացիներն ար-  
 տաքսում են իւր անտառի տնից դստեր ու տատի հետ, օ-  
 րովհետեւ չէ ցանկանում նոցա խմբի մէջ մտնել: Սա հազար  
 անգամ վատ է քան պատերազմի հարկահանութիւնը. այնպի-  
 սի բան, որից մազերը բիզ բիզ են կանգնում:

Նորա դուտորը ևս կարեկցեց մեզ, նա ասաց, թէ եր-  
 կինքը պիտի պատուէր և անպիտան - գերմանացիներին  
 ճնշէր: Յետոյ ինձ վերև տարաւ, որ ցուց տալ ալն երեք սե-  
 նեակները, որ ուղում էի վարձել:

Չես կարող երեակայել դորանից աւելի խղճուկ բնակա-  
 րան. առաստաղի գերաններին ձեռքով կարելի էր հասնել.  
 ցած պատուհաններից, որոնք ծածկուած էին ժալոներով, հա-  
 զիւ էր թափանցում ցերեկուայ լուսը:

Ինչ համեմատութիւն սորա և մեր անտառի տան մէջ, որ լլու էր և ուրախ, և նկարչական գեղեցկութեամբ կանգնած բլուրի ստորոտին: Այժ, ալս բնակարանը շատ տխուր տրպատարութիւն դարձեց մեզ վերայ, բայց ընտրութիւն անելու ոչինչ չկար, պէտք էր ուրեիցէ տեղաւորուել:

Ես խնդրեցի Կատէլին կրակ վառել մեծ սենեակում, որպէս զի խոնաւութիւնը մի փոքր անցնի. լետու, ցած իջնելով, ձերուսի իկէլի հետ որոշեցինք, որ ես վերցնեմ առաջին լարկը, ախոռում երկու տեղ կովերի համար, մի փոքր խոտնոց, խոզերի համար փոքր տեղ, նկուղի մի մասը գետնախնձոր պահելու, և սալատան կէտը, ուր պահեմ կարասիս ալն մասը, որ չի տեղաւորուի երեք սենեկում. ալս ամենի համար պարտաւորուեցայ վճարել ութ Ֆրանկ,—բաւական նշանաւոր գումար, մանաւանդ մի այնպիսի ժամանակ, երբ մի սանտիմ անգամ չէիր կարող վաստակել:

Երկու թէ երեք դրացի, բարձրահասակ ամխաղաճաւ Շտարկը և նորա կին Սօֆին, կողովագործ Կօֆֆէլը և հին մաքսանենգ Կիւլտը, սովորաբար մտնում էին պանդոկը մի մի բաժակ օղի խմելու. իկէլը նոցա պատմում էր գերմանացիներէ նորանոր զարհուրելի արարքների մասին, և ամենքն էլ լուզուած էին: Շտարկը առաջարկեց իմ կարասին փոխադրել իւր ձիաներով ու սալակով, և ես ամենալն սիրով ընդունեցի ալդ առաջարկը:

Այսպէս տրեմն վճռուած էր, որ Շտարկը անպատճառ մինչև 12 ժամը կզալ մեզ մօտ: Ես դարձայ տուն: Արևն էր գալիս, ոչ մի շնչաւոր էակ չտեսայ ամբողջ ճանապարհին, և երեկոյեան ինն ժամին մօտ այնչափ մեծ ձիւն էր գալիս, որ հարկ եղաւ ոտներից թափ տալ՝ ճանապարհը շարունակելու համար:

Երբ տուն հասայ՝ չորս խօսքով ասացի Վարդ-Մարիին թէ բնակարանը վարձեցի, թէ պէտք է տատին պատրաստել ճանապարհ գնալու համար, բոլոր իրերը դարսել կողովներում և կարասին պատրաստել փոխադրելու: Կալասին կանչեցի, որ օգնէ ինձ և իսկոյն գործի ձեռք զարկինք: Մուրճի թիթիկեցով լցուեց ամբողջ տունը, լսում էինք, ինչպէս տատը հեկեկում էր սենեակում, իսկ Վարդ-Մարին մխիթարում նորան:

Ահա բոլորը ինչ որ լիշում եմ: Սարսափելի էր խեղճ